

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ջրադեփոխություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2001Ն. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1430.1 հազ. մարդ, որոնց 89.3 % կամ 1277.6 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 10.7% կամ 152.5 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 34.5% կամ 440.3 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9000 սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2001թ. ապրիլին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 8.1%: Այս սուբյեկտներում զբաղված բնակչության 45.9% զբաղված է եղել սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցիալական ապահովություն, կրթություն, մշակույթ, արվեստ) 26.1%՝ արդյունաբերության մեջ, 6.7%՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.3%՝ շինարարության մեջ, 3.1%՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 6.0% կառավարման համակարգում, և 7.9%՝ այլ ճյուղերում:

2001թ. ապրիլի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 175.5 հազ.աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1% կամ 174.0 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 86.6% կամ 150.7 հազ. մարդ:

2001թ. ապրիլին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 2.0 հազ. մարդ, որոնցից 1.7 հազարը կամ 85.0% ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.7 հազ. մարդ, որոնցից՝ 39.8%՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2001թ. ապրիլին*

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ
Ընդամենը	175.5	84.1	150.7	83.7
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.2	73.3	1.6	76.2
Արարատ	8.2	82.0	6.6	84.6
Արմավիր	11.5	72.3	8.8	69.8
Գեղարքունիք	10.4	80.0	7.4	80.4
Լոռի	24.9	81.9	21.5	78.8
Կոտայք	13.9	74.7	10.8	72.5
Շիրակ	33.3	93.3	29.4	91.6
Սյունիք	16.0	100.0	13.8	98.6
Վայոց Ձոր	2.1	87.5	1.8	85.7
Տավուշ	5.2	81.3	4.6	82.1
Երևան	47.8	83.4	44.4	84.9

**)ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով*

Գործազուրկ բնակչության 95.0 % կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.5 %՝ Երևան, 17.9%՝ Գյումրի և 8.6%՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 65.0%: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2000թ. ապրիլի նկատմամբ աճել է 1.3 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2001թ. ապրիլին կազմել է 431 մարդ. այդ թվում՝ 71.9% կամ 310-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2001թ. ապրիլին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 670 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 404 չզբաղված մարդ:

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2001թ. ապրիլին կազմել է 9.2 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը 3293 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2001թ. ապրիլին կազմել է 10.6% և մարտի համեմատությամբ նվազել է 0.1 տոկոսային կետով, իսկ 2000թ. ապրիլի նկատմամբ նվազել է 1.7 տոկոսային կետով: